# «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերություն

Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորական հաշվետվություն
2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Deloitte.

Դելոյթ Արմենիա ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Ամիրյան փող. 4/7
«Իմպերիում Պլազա» բիզնես
կենտրոն, 7-րդ հարկ

Հեռ՝ +374 10 52 65 20
Ֆաքս՝ +374 10 52 75 20
www.deloitte.am

## ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերին՝

### Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, ինչպես նաև դրանց առնչվող ծանոթագրությունները, պատրաստվել են «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Մեր կարծիքով, կից ներկայացված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ համաձայն ծանոթագրություն 3-ում նկարագրված հիմունքների:

### Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով (ՖՀՄՍ) պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ աուդիտորի եզրակացության ընթերցմանը:

### Աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունները և դրա վերաբերյալ մեր եզրակացությունը

2019 թ. ապրիլի 30-ին ներկայացված մեր եզրակացության մեջ արտահայտել ենք մեր չձևափոխված կարծիքը աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Եզրակացությունը նաև ներառում է՝

- Աուդիտի առանցքային հարցերի վերաբերյալ հաղորդակցությունը: Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, ըստ մեր մասնագիտական դատողության՝ առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թոմացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ընկերությունների ցանցը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «ԴելոյթԹուշԹոմացուԼիմիթեդ»-ի, նրա անդամ ընկերությունների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte.com/about: ԱՊՀ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք www.deloitte. am/about:
© 2019 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

**Ղեկավարության պատասխանատվությունը ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար**

Բանկի ղեկավարությունը պատասխանատու է ծանոթագրություն 3-ում նկարագրված հիմունքով աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ամփոփ տարբերակը կազմելու համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը**

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ առ այն, որ դրանք բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված համախմբված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմնվելով Աուդիտի միջազգային ստանդարտ (ԱՄՍ) 810՝ «Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ» ստանդարտի համաձայն իրականացված ընթացակարգերի վրա:

Սրբուհի Հակոբյան
Գործադիր տնօրեն
«Դելոյթ Արմենիա» ՓԲԸ

Արփինե Ղևոնդյան
Աուդիտի տնօրեն

Երևան, Հայաստանի Հանրապետություն
Ապրիլի 30, 2019 թ.

## «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

### ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

*Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ*

| | 2018 թ. | 2017 թ. |
|---|---|---|
| Տոկոսային եկամուտ | 17,664,310 | 14,362,831 |
| Տոկոսային ծախս | (8,922,279) | (7,281,637) |
| **Զուտ տոկոսային եկամուտ նախքան տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստները** | **8,742,031** | **7,081,194** |
| Տոկոսակիր ակտիվների գծով արժեզրկումից կորուստներ | (435,226) | (161,436) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **8,306,805** | **6,919,758** |
| Զուտ օգուտ/(վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից և պարտավորություններից | 169,791 | (231,661) |
| Վճարներ և կոմիսիոն եկամուտներ | 2,125,762 | 1,799,812 |
| Վճարներ և կոմիսիոն ծախսեր | (489,913) | (461,819) |
| Զուտ օգուտ արտարժույթով առևտրից | 851,058 | 1,046,286 |
| Զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչումից | 741,354 | 533,283 |
| Այլ ակտիվների/պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գծով պահուստի վերականգնում | 18,969 | - |
| Այլ եկամուտ | 268,002 | 478,068 |
| **Զուտ ոչ տոկոսային եկամուտ** | **3,685,023** | **3,163,969** |
| **Գործառնական եկամուտ** | **11,991,828** | **10,083,727** |
| Անձնակազմի գծով ծախսեր | (4,144,498) | (3,815,344) |
| Հիմնական միջոցների մաշվածություն | (665,863) | (575,634) |
| Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա | (50,283) | (38,902) |
| Այլ ծախսեր | (4,478,468) | (3,618,191) |
| **Գործառնական ծախսեր** | **(9,339,112)** | **(8,048,071)** |
| **Շահույթը նախքան շահութահարկով հարկումը** | **2,652,716** | **2,035,656** |
| Շահութահարկի գծով ծախս | (574,690) | (485,259) |
| **Տարվա շահույթ** | **2,078,026** | **1,550,397** |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | |
| **Շահույթում կամ վնասում վերադասակարգման ոչ ենթակա հոդվածներ** | | |
| Հիմնական միջոցների վերագնահատում | | |
| Վերագնահատմանը վերաբերող շահութահարկ | 4,306 | - |
| **Շահույթում կամ վնասում վերադասակարգման ենթակա հոդվածներ** | | |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից զուտ օգուտ տարվա համար | 368,625 | 912,045 |
| Տարվա ընթացքում այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ապաճանաչման մասով վերադասակարգման ճշգրտում | (633,682) | (563,536) |
| Տարվա զուտ օգուտ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների արժեզրկումից | 18,811 | - |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներին վերաբերող շահութահարկ | 49,249 | (69,209) |
| **Ընդամենը տարվա այլ համապարփակ եկամուտ նախքան շահութահարկով հարկումը** | **(192,691)** | **279,300** |
| **Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ** | **1,885,335** | **1,829,697** |
| Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթ | | |
| Բազային | 0.97 | 0.84 |
| Նոսրացված | 0.97 | 0.84 |

**Հաստատված է 2019 թ. ապրիլի 30-ին հրապարակման համար:**

**Արամ Խաչատրյան**
Գործադիր տնօրեն

**Միքայել Պողոսյան**
Ֆինանսական տնօրեն/Գլխավոր հաշվապահ

Ապրիլի 30, 2019 թ.
Երևան, Հայաստանի Հանրապետություն

Տես ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

## «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
### 2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
*Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ*

| | 2018 թ. դեկտեմբերի 31 | 2017 թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|
| **Ակտիվներ՝** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 38,158,045 | 35,824,831 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ | 17,468 | - |
| Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | 13,175,950 | 13,030,610 |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր | 3,882,703 | 4,296,862 |
| Հաճախորդներին տրված վարկեր և կանխավճարներ | 133,629,775 | 104,216,558 |
| Ներդրումային արժեթղթեր | 19,752,226 | 21,704,806 |
| Հիմնական միջոցներ | 10,330,854 | 9,304,697 |
| Ոչ նյութական ակտիվներ | 506,593 | 321,118 |
| Այլ ակտիվներ | 2,243,783 | 2,103,317 |
| **Ընդամենը ակտիվներ** | **221,697,397** | **190,802,799** |
| | | |
| **Պարտավորություններ և սեփական կապիտալ** | | |
| **Պարտավորություններ՝** | | |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ | - | 7,706 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 2,060,960 | 1,068,764 |
| Հետգնման պայմանագրեր | 20,519,048 | 20,511,989 |
| Այլ փոխառու միջոցներ | 64,200,798 | 39,531,118 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 95,828,768 | 91,703,898 |
| Շահութահարկի գծով վճարման ենթակա գումարներ | 273,836 | 373,239 |
| Հետաձգված հարկային պարտավորություններ | 849,982 | 1,096,006 |
| Ստորադաս վարկեր | 3,382,149 | 6,409,601 |
| Այլ պարտավորություններ | 1,568,539 | 1,071,870 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **188,684,080** | **161,774,191** |
| | | |
| **Սեփական կապիտալ՝** | | |
| Բաժնետիրական կապիտալ | 22,266,343 | 13,708,745 |
| Էմիսիոն եկամուտ | - | 33,438 |
| Վերագնահատման հավելաճ | 3,055,334 | 3,157,777 |
| Գլխավոր պահուստ | 3,000,000 | 6,000,000 |
| Ներդրումների վերագնահատման պահուստ | 1,501,220 | 1,531,277 |
| Չբաշխված շահույթ | 3,190,420 | 4,597,371 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **33,013,317** | **29,028,608** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | **221,697,397** | **190,802,799** |

Տես ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

## ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
## 2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

*Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ*

| | Բաժնե-տիրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Գլխավոր պահուստ | Հիմնական միջոցների վերագն. Պահուստ | Ներդրումների վերագն. պահուստ | Չբաշխված շահույթ | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|---|
| **Մնացորդը 2017 թ. հունվարի 1-ի դրությամբ** | **4,631,333** | **9,110,850** | **6,000,000** | **3,264,437** | **1,251,977** | **3,310,821** | **27,569,418** |
| Տարվա շահույթ | - | - | - | - | - | 1,550,397 | **1,550,397** |
| Տարվա այլ համապարփակ եկամուտ, առանց շահութահարկի | - | - | - | - | 279,300 | - | **279,300** |
| Վերագնահատման պահուստի մաշվածության փոխանցում, առանց շահութահարկի | - | - | - | (106,660) | - | 106,660 | - |
| Հայտարարագրված շահաբաժիններ | - | - | - | - | - | (370,507) | **(370,507)** |
| Էմիսիոն եկամտից փոխանցում բաժնետիրական կապիտալին | 9,077,412 | (9,077,412) | - | - | - | - | - |
| **Մնացորդը 2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ (նախկինում ներկայացված)** | **13,708,745** | **33,438** | **6,000,000** | **3,157,777** | **1,531,277** | **4,597,371** | **29,028,608** |
| ՖՀՄՍ 9-ին անցում կատարելու ազդեցությունը | - | - | - | - | 166,940 | (557,248) | **(390,308)** |
| **Վերահաշվարկված** | **13,708,745** | **33,438** | **6,000,000** | **3,157,777** | **1,698,217** | **4,040,123** | **28,638,300** |
| Տարվա շահույթ | - | - | - | - | - | 2,078,026 | **2,078,026** |
| Տարվա այլ համապարփակ եկամուտ, առանց շահութահարկի | - | - | - | 4,306 | (196,997) | - | **(192,691)** |
| Վերագնահատման պահուստի մաշվածության փոխանցում, առանց շահութահարկի | - | - | - | (106,749) | - | 106,749 | - |
| Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում | 3,000,000 | - | - | - | - | - | **3,000,000** |
| Հայտարարագրված շահաբաժիններ | - | - | - | - | - | (510,318) | **(510,318)** |
| Ներքին շարժ | 5,557,598 | (33,438) | (3,000,000) | - | - | (2,524,160) | - |
| **Մնացորդը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **22,266,343** | **-** | **3,000,000** | **3,055,334** | **1,501,220** | **3,190,420** | **33,013,317** |

Տես ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

## «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

### ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ

*Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ*

| | 2018 թ. | 2017 թ. |
|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից** | | |
| Տարվա շահույթ | 2,078,026 | 1,550,397 |
| *Ճշգրտումներ՝* | | |
| Շահութահարկի գծով ծախս | 574,690 | 485,259 |
| Տոկոսակիր ակտիվների արժեզրկումից կորուստներ | 435,226 | 155,678 |
| Այլ ակտիվների/պարտավորությունների և պայմանական պարտավորույթունների գծով պահուստի վերականգնում | (18,969) | - |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 716,146 | 614,535 |
| Հիմնական միջոցների օտարումից վնաս | 19,421 | 17,969 |
| Եկամուտ դրամաշնորհներից | - | (240) |
| Արտարժույթի փոխարկումից զուտ վնաս | 38,625 | (276,643) |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ | (741,354) | (533,283) |
| Այլ եկամուտ | (8,536) | - |
| **Գործառնական գործունեությունից ստացված դրամական ներհոսք՝ նախքան գործառնական ակտիվներում կամ պարտավորություններում փոփոխությունները** | **3,093,275** | **2,013,672** |
| **Գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխություններ** | | |
| *Գործառնական ակտիվների (աճ)/նվազում.* | | |
| Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | (341,402) | (5,319,747) |
| Հակադարձ հետգնման պայմանագրեր | 414,196 | 255,565 |
| Հաճախորդներին տրված վարկեր | (30,617,959) | (28,720,245) |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ | (1,651) | - |
| Այլ ակտիվներ | (141,364) | (596,946) |
| *Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում).* | | |
| Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ | - | 816,675 |
| Հետգնման պայմանագրեր | 7,324 | 7,287,234 |
| Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ | 4,683,868 | 25,071,374 |
| Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ | (7,696) | - |
| Այլ պարտավորություններ | 333,498 | (44,802) |
| **Գործառնական գործունեությունում օգտագործված/գործառնական գործունեությունից դրամական միջոցներ՝ նախքան հարկումը** | **(22,577,911)** | **762,780** |
| Վճարված շահութահարկ | (768,985) | (71,619) |
| **Գործառնական գործունեությունում օգտագործված/գործառնական գործունեությունից զուտ դրամական միջոցներ** | **(23,346,896)** | **691,161** |
| **Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից** | | |
| Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում | (5,471,920) | (10,783,114) |
| Մինչև մարման ժամկետը պահվող ֆին. ակտիվների ձեռքբերում | - | (50,169) |
| Ներդրումային արժեթղթերի վաճառքից մուտքեր | 7,902,154 | 6,192,862 |
| Հիմնական միջոցների ձեռքբերում | (2,091,328) | (1,533,327) |
| Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր | 379,887 | 72,089 |
| Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (235,758) | (128,757) |
| **Ներդրումային գործունեռթյունից ստացված/(գործունեությունում օգտագործված) զուտ դրամական միջոցներ** | **483,035** | **(6,230,416)** |

## «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերություն

### ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
### 2018 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)
*Հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ*

| | | |
|---|---|---|
| **Դրամական միջոցների հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | |
| Ստորադաս պարտքից մուտքեր | (3,026,027) | 1,009,429 |
| Թողարկված պարտքային արժեթղթերից մուտքեր | 991,753 | - |
| Այլ փոխառու միջոցներ | 24,854,167 | 8,645,403 |
| Արտոնյալ բաժնետոմսերի թողարկում | 3,000,000 | - |
| Վճարված շահաբաժիններ | (379,731) | (338,365) |
| **Ֆինանսական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ** | **25,440,162** | **9,316,467** |
| Արտարժույթի փոխարկման ազդեցությունը արտարժույթով պահվող դրամական միջոցների մնացորդների վրա | (206,725) | (12,210) |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | **2,369,576** | **3,765,002** |
| **Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեսկզբի դրությամբ** | **35,824,831** | **32,059,829** |
| **Դրամական միջոցներ և համարժեքներ՝ տարեվերջի դրությամբ** | **38,194,407** | **35,824,831** |

Տես ամփոփ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները:

## 1. ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, ինչպես նաև նրանց առնչվող ծանոթագրությունները, պատրաստվել են «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերության 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

## 2. ԲԱՆԿԸ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ «Բանկ») հիմնվել է 1991 թ. Հայաստանի Հանրապետությունում ԽՍՀՄ Բնակսոցբանկի հայկական Հանրապետական բանկի (1991-1993 թ.-ին «Հայպետբանկ» ՓԲԸ) հիման վրա և 1995 թ.-ին վերակազմավորվել որպես բաց բաժնետիրական ընկերության: Բանկի գործունեությունը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ և այն գործում է ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ ՀՀ ԿԲ) կողմից տրամադրված թիվ 1 արտոնագրի հիման վրա:

Բանկն ընդունում է ավանդներ, տրամադրում վարկեր, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց մատուցում է այլ բանկային ծառայություններ:

Բանկի գլխամասային գրասենյակը և թվով 27 մասնաճյուղերը գտնվում են Երևանում, 20 մասնաճյուղեր՝ ՀՀ տարբեր մարզերում և 1 մասնաճյուղ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ք. Երևան, Ամիրյան 23/1:

## 3. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են 2018 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված ամբողջական, աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար ղեկավարությունից պահանջվում է որոշել այն տեղեկատվության ծավալը, որն անհրաժեշտ է արտացոլել ամփոփ ֆինանսական հաշվետվություններում, որպեսզի դրանք բոլոր էական առումներով համապատասխանեն աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններին կամ ներկայացնեն դրանց ճշմարտացի ամփոփումը:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ղեկավարության կողմից՝ հիմնվելով հետևյալ չափանիշների վրա՝

(ա) արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկությունները համապատասխանում են ամբողջական աուդիտ անցած ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկություններին, և

(բ) արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով պարունակում են այն ողջ տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է ամբողջական ֆինանսական հաշվետվություններում և դրանց կից ծանոթագրություններում ներառված տեղեկատվությունը խեղաթյուրված կամ ոչ հստակ ներկայացնելուց խուսափելու համար:

Լինելով ամփոփ և խմբավորված՝ սույն ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն կարող լիակատար պատկերացում ապահովել Բանկի ֆինանսական արդյունքների և ֆինանսական վիճակի վերաբերյալ: Բանկի ամբողջական աուդիտ անցած համախմբված ֆինանսական հաշվետվությունները հասանելի են ըստ պահանջի՝ Բանկին դիմելու միջոցով: